ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2019 թվականի N84-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՔԱՐԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՐՄԵՆՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետով, հիմք ընդունելով «Քարաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհուրդների նիստերի քաղվածքները և տնօրեն Գ.Մկրտչյանի 2019 թվականի օգոստոսի 8-ի գրությունը՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Քարաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը անվանակոչել ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհված «Մխիթար Սպարապետ» ջոկատի հրամանատար Լերմենտ Սարգսյանի անվամբ:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Քարաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կազմակերպության կանոնադրության 1. Ընդհանուր դրույթներ գլխի 1-ին կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Քարաշենի Լերմենտ Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական մեկ կամ մի քանի ընդհանուր, այդ թվում՝

հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցմամբ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է»

2) Կազմակերպության կանոնադրության 1. Ընդհանուր դրույթներ գլխի 6-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«6. Դպրոցի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Քարաշենի Լերմենտ Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն.
2) հայերեն կրճատ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Քարաշենի Լերմենտ Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ.
3) ռուսերեն լրիվ՝ Государственная некоммерческая организация «Карашенская средняя школа имени Лермента Саргсяна» Сюникской области Республики Армения.
4) ռուսերեն կրճատ՝ ГНО «Карашенская средняя школа имени Лермента Саргсяна» Сюникской области РА.
5) անգլերեն լրիվ՝ Republic of Armenia Syunik marz «Karashen secondary school after Lerment Sargsyan» State Non Profit Organization.
6) անգլերեն կրճատ՝ RA Syunik marz «Karashen secondary school after Lerment Sargsyan» SNPO»:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Քարաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը կապված կազմակերպության անվանակոչման հետ:

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Քարաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ կանոնադրության փոփոխությունը գրանցել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժնում:

9/16/2019

X

ՆԱՐԵԿ ԲԱԲԱՅԱՆ

Подписано: BABAYAN NAREK 1505920434

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2019թ. սեպտեմբերի 16
ք. Կապան